ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 560 360
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

19.06.2013թ.
201-ի 6

Հայաստանի Ազգային արխիվի տնօրեն
պարոն Ամատունի Վիրաբյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Վիրաբյան,

Մեզ է դիմել ՀՀ քաղաքացի Անահիտ Բեկյանը եւ խնդրել է օգնել իրեն տեղեկատվություն ստանալու հարցում: Նա բնակվում է ք. Երեւան, Նոր Արեշ 15փ, 56 տանը, որը Էրեբունու շրջգործկոմի՝ 31.08.1995թ.-ի թիվ 33/150 որոշմամբ որպես սեփականություն հանձնվել է նրա տատիկին՝ Զարուհի Եղիազարյանին եւ նրա ընտանիքին, նաեւ՝ նրան: Այժմ իրենց հատկացված տունը որպես սեփականություն գրանցելու համար Երեւանի քաղաքապետարան եւ ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ ներկայացնելու համար նրան անհրաժեշտ են որոշ փաստաթղթեր:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել արխիվային տեղեկանք ք. Երեւան, Նոր Արեշ 15փ, 56 տան տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերի վերաբերյալ (ու՞մ է տրամադրվել, ո՞ր թվականին, քանի՞ ք/մ տարածք է տրամադրվել, ի՞նչ որոշմամբ եւ այլն):

Կից ներկայացնում ենք փաստաթղթեր, որոնք կարող են օգնել վերոնշյալ հողամասի հատկացման հիմքերի մասին տեղեկություններ գտնելուն.

- Արխիվային տեղեկանքի պատճեն տան հատկացման մասին,
- Տեղեկանքի պատճեն տան կառուցման տարեթվի վերաբերյալ,
- Էրեբունու շրջգործկոմի՝ 31.08.1995թ.-ի թիվ 33/150 որոշման պատճեն,
- Լիազորագիր՝ տրված Անահիտ Բեկյանի կողմից:

Նշենք, որ ք. Երեւան, Նոր Արեշ 15փ, 56 տունը ամենայն հավանականությամբ կառուցվել է 1946թ.-ին, սակայն հնարավոր է այդ տարեթիվը տատանվի՝ 1940-ական թվականներին:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան